# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ն «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/13» ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 22 | Հատակի մաքրող հեղուկ | Հատակի մաքրող հեղուկ | Հատակի մաքրող հեղուկ | Հատակի մաքրող հեղուկ | Մակերեսների ամենօրյա մաքրման պրոֆեսիոնալ կոնցենտրատ (խտանյութ): Էկոլոգիապես անվտանգ, պատրաստված բուսական ծագման բնական հումքից, ամբողջությամբ կենսաքայքայվող: Չպետք է պարունակի ֆոսֆատներ, նիկել, հալոգեններ և ագրեսիվ լուծիչներ: Օգտագործման դոզավորումը՝ ոչ ավել, քան 1% (100 մլ խտանյութ՝ 10 լիտր ջրին): Պետք է պարունակի բնական եթերային յուղեր (օրինակ՝ պաչուլիի, նարնջի, նարդոսի կամ համարժեք), որոնք ապահովում են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | երկարատև թարմության բույր` բացառելով սուր սինթետիկ քիմիական հոտերը: Պետք է ապահովի տարբեր տեսակի մակերեսների արդյունավետ մաքրում` առանց ջրային հետքեր և բծեր թողնելու, չպահանջի լրացուցիչ պարզաջրում և օժտված լինի մակերեսներին բնական փայլ հաղորդող հատկությամբ: Ապրանքը պետք է լինի թեստավորված նիկելի նկատմամբ` նիկելի պարունակությունը չպետք է գերազանցի 0.01 ppm (0.00001%) շեմը: Անձնակազմի մոտ հնարավոր ալերգիկ ռեակցիաները բացառելու նպատակով ապրանքի հիպոալերգենությունը, էկոլոգիական անվտանգությունը և նիկելի նկատմամբ թեստավորված լինելու փաստը (Nickel Tested կամ համարժեք) պետք է հավաստվեն արտադրողի որակի անձնագրով (համապատասխանության սերտիֆիկատով) կամ հավատարմագրված լաբորատոր փորձարկումների արձանագրությամբ, կամ ապրանքի գործարանային պիտակի վրա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | միջազգայնորեն ընդունված էկո-մակնշման լոգոների (օրինակ՝ EU Ecolabel կամ դրան համարժեք) առկայությամբ: Ապրանքը պետք է մատակարարվի 5 կգ (կամ 5 լիտր) ծավալով, բարձր խտության պոլիէթիլենային (HDPE) ամուր, գործարանային պլաստիկե տարաներով: Տարայի վրա պետք է առկա լինի արտադրողի պաշտոնական պիտակը՝ հայերեն կամ ռուսերեն, կամ անգլերեն լեզվով, որտեղ հստակ ընթեռնելի կլինեն տեխնիկական տվյալները, բաղադրությունը և օգտագործման (դոզավորման) հրահանգը: Մատակարարվող ապրանքի պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին պետք է կազմի արտադրողի կողմից սահմանված ընդհանուր ժամկետի առնվազն 75%: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, նոր և որակյալ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Лерник Мурадханян Артемович ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/13» ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 22 | | | | | |